

## Ն. ԹԱԼՎՄԻՉՅԱՆ

### ՈՒԹ-ԶԱՅՆԻ ՍԿՍ-ԼԱՇՔՆԵՐԸ

Հայկական ութ-ձայնի հնամակարգում (տես՝ սուրբան մեջ, թե գործնականում) հնուց ի վեր կարևորագույն տեղ են գրավել չափա-նմուշ եղանակների սկսվածքները:

Դրանք իրենց համապատասխան չափա-նմուշների ձայնային, ելեկային ու մասամբ նաև կշռոյթային մոտոք (Եերածությունն) ու հիմունքն են միաժամանակ, շարադրված լակունարար և հնարավորին չափ պարզ կերպով:

Սկսվածքներն ունեն. ա) տեսության ոլորտում՝ նմուշօրինակող, բ) ուսուցման մեջ՝ ձայնեղանակների լուրացումը հայտապատրաստող, գ) և պաշտոններգության ընթացքում սահմուներից դեպի շարականները մեղեդիական անցումն ապահովող իրակությունների եռակի հշանակույթյունն:

Գրեթե նույնին է պարագան նաև առնա-սարակ արևելյան-քրիստոնեական երաժշտության մեջ, ասենք՝ բյուզանդական և ոուսկան հոգևոր արվեստներում, որ, մի դեպքում՝ նշուշ (կամ չուշչուշ և կամ չուշչուշ), մյուս դեպքում՝ ողլասիւց կոչվող իրակություններն իրենց կառուցվածքի տրամարանությամբ ու կատարած պաշտոններով մեր սկսուածք ասածի նմանակներն են:

Նշված համատիպների միջն, անշուշ, տարրերություններ են կամ, որոնցից գլխավորագույնը, թերևս, նետուալն է:

Այն դեպքում, եթե բյուզանդական նշուշ - Եերն, օրինակ, զուգորդվում են. վերջին հաշվով, պայմանական վաճկերից բաղկացած

բառերի<sup>1</sup>, իսկ ոռուական ողլասիւց-ները՝ նաև արտասահմատմաքային խոսքերի ներ<sup>2</sup>, նայոց սկսվածքների գրական հիմքը կազմում են բացառապես սահմուներից ու օրմնություններից բաղված տողեր<sup>3</sup>:

<sup>1</sup> Այսպես. «ած»-չառանէ, «ակ» - չնռանէ, «քճ»-չառանէ, «քի» - չնռանէ. և այլն: Տե՛ս E. Wellesz, A History of Byzantine Music and Hymnography, 2-րդ հրատ., էջ 304:

<sup>2</sup> Խեցքն օրինակ՝ «ած»- Աdam ու զեման Բօ- րու սուսան և բար աւելու... և այլն: Տե՛ս N. У- սունեցի, Древнерусское певческое искусство, Москва, 1965, էջ 61:

<sup>3</sup> Միակերպ՝ բոլոր ուր ձայնների համար՝ ըստ կա- նոնի երգերի տեսամների, այսպէս. օրմնութիւն՝ «Օրմնեցոյք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» (Մովսէսի և որդուն Խորակէի, Ել. ԺԵ, 1), Բարց՝ «Օրմնեալ և Տէր Աստուած Բարցըն մերց, օրմնալ փառաւորեալ անոն որ յախտնան» (օրմն, երից մաննեանց, Դամ. Գ, 28), մեծացոյք՝ «Մեծացոյք անձն իմ զՏէր, և նանացէ նոզի իմ Աստուծով փըրկ- չա իմով» (օրմ. Աստուածանի, Ղրիկ. ա, 46), ողորմնան՝ «Ողորմնան իմն Աստուած, ըստ մնձի ողոր- մութեան քուն, ըստ բազում զքութեան ուր բաւեա զանօրէնութիւնն իմ» (սաղմ. Ծ), Տէր յերկեցից՝ «Օրմնեցէր զՏէր յերկնից, օրմնեցէր զնա ի բար- ձանց» (սաղմ. ԾԽԸ), մամկունք՝ «Օրմնեցէր մամ- կունք զՏէր, և օրմնեցէր զանունցն Տեան» (սաղմ. ԾԵՒ), մամբարձի՝ «Համբարձի զաս իմ ի լորինս ուստի եկիցցէ: իմն օգնութիւն (սաղմ. ԾԻ), ճաշու՝ «Տէր բագաւորեաց զվարեւորին զգեցա» (սաղմ. ՂԲ) կամ «Սիրեցի» զի լուիցէ Տէր զգայն աղօթից

«Սկսուած» խորի դիմաց նոր բաղդրի նեղանակները թերում են՝ «սկսում», «սկիզբն», «ծագում» և „Առջ” ու „Principium” հավացորդումները<sup>4</sup>, որոնք արտացոլում են մեզ զրադեցնող եզրի նաև երաժշտական հին ու միջնադարյան առումները:

Հունական միջնադարյան երաժշտա-տեսական անանոն մի գրության համաձայն և՛ նշան<sup>5</sup>՝ սկսվածքն ուրիշ բան չէ, եթե ոչ համապատասխան ձայնեղանակի «հատուկագիծ»<sup>6</sup>:

Համեմատ է դիմու նաև, որ այս հարցում իրար են համաձայնում և կամ իրար լրացնում են տարբեր հնտագուտողների եզրանակումները:

Այսպես, Ե. Վելեչը քննելով բրուգանական սկսվածքները գալիս է եղբակացության, թե դրանք իրենց համապատասխան ձայնեղանակների «հատուկագիծներ» են այն իմաստով, որ հանդիսադրում են դրանց (ինչյալ ձայնեղանակների) մեղեդիական կոսուցվածքներ հատուկ գլխավոր ձայնամիջոցները կամ եկեղային բայլերը<sup>7</sup>: Մինչ Ն. Ռուբենսին հավաստում է, որ պատշաճ նոգերը երաժշտության ողլանուականվածքներն այնպիսի են հարաբերում համապատասխան ձայնեղանակներին (արագ ձայնայում տիպարներին), ինչպես մեղեդիական արմատական հշանակությունն ունեցող պատումները կամ դարձվածքները՝ «լեյտոնիկները՝ իրենց մշակումներին»<sup>8</sup>:

Ինչ վերաբերում է նազ եկեղեցական երաժշտության սկսվածքներին, ապա մեր դիմու

տողությունները ցույց են տալիս, որ դրանք (իրենց ուրիշ տեսակներով) առաջադրում են՝ տվյալ ձայնեղանակի լադային կառուցվածքը («դիմող», «զործածական» ու «վերջավորող» ձայնները), ելեւշային (մասամբ նաև կշուրշային) նկարագիրն ու երգն սկսելու, ձավակելու և վերջավորելու նպատակին ծառայող մեղեդիական գլխավորագույն դարձվածքները կամ պատումները: Հատ այդմ էլ՝ սկսվածքների միակցության պաշտոնը տեսության մեջ ուրիշ բան չէ, բան եթե (միջնադարի շահացուցերով) նմուշօրինակել (ուժեւեց) ուր-ձայնի ողջ համակարգը:

Ներկայացնելով պարզ ու մատչելի, ամբողջական մեղեդիներ, սկսվածքները հնուց ի մեր ունեցել են նաև ուսուցողական նյութի նշանակություն: Տակավին Ե. Տնտեսանը միշտ կերպով նկատում էր. «Երգեր ուսուցնելու համար կերպին թե մեր նախնիքն ալ կգործածեն նախապես սկսվածներ ուսուցանուությունը, որ կգործածվի մինչև շայածը. աշակերտը նախ և առաջ ձայններու սկսվածքները ուսնելով իր եկեղչ կոպավորվին ասոնք իրեն նիշողությանը մեջ, որով երգերու եղանակները դյուրավ կը մրցնեն. հետ ժամանակաց երգ ասոնցով երգ մը կամփ, անոր եղանակին եկեղչը կնորոգի յոր նիշողությանը մեջ, երգին ձևն ու դաշնակն ալ խազերու օգնությամբ և ականջաւոր նիշողությամբ կգտնեն, և բայ այնմ կը ընտանի երգել գրեթե ամեն ընթացիկ երգեր»<sup>9</sup>:

Եմ իրոք, Գ.ր. Գապասարքալյանն, օրինակ, որ գրեթե ամրող կությամբ միջնադարյան տիպի երաժշտում է, իր գրվածքներում սկսվածքների մասին խոսում է որպես ուսուցնել-կրթական նյութի: Երաժշտության տեսարանը նախարարկան առաջ է թերում ուրագնեղանակների սկսվածքները (խազերով) ու տալիս անհերանջև բացատրությունը. «Սորա յիրահ կրթողը և վարժողը են իր զնորահանուն,—գրում է նա, —ակնարկելով եկեղեցական ապագա եղանակները,—որ նախ բան բարձր սկսեցն. մեղմ և հանդարտիկ սկսեն ձայնի, և ապա դուն ինչ յառաջ երթևալ բարձրանայ, որպէս թէ աստիճան բան զատիճան եղանելով»<sup>10</sup>...

Գալով սկսվածքների գործական կարեւոր դերին պահպաներգության մեջ, ապա դրան փաստորեն առաջինը անդրադարձավ Գ. Ասէտիքայանը, ըստ որում երևույթը քննելով պատմական առումով: «Զեղանակ երգեցութեան շարականաց,—նշել է նա,

<sup>4</sup> Նոր բաղդրից Հայկագեան լիզուի, նու. Բ.:

<sup>5</sup> L. Tardo, L'Antica metallurgia bizantina, Grottaferrata, 1938, էջ 210:

<sup>6</sup> E. Wellesz, նշվ. աշխ., էջ 303-309:

<sup>7</sup> H. Սպենքսի, նշվ. աշխ., էջ 60:

<sup>8</sup> Նկարագիր Երգոց Հայատանեալցու նկեղեցոյ, Պոլիս, 1874, էջ 119:

<sup>9</sup> Գ.ր. Գապասարքալյան, Գրքով որ կոչի. Շուագարան, Կ. Պոլիս, 1794, էջ 198:

նկատի ունենալով սաղմուների և շարականների խառն (ընդելուզված) երգեցողությունը, —այլազգի տեսանեմք յառաջիններ՝ քան զոր այժմ առնենք: Վասն զի ընթեռնումք ի Բիե խրատ ժամակարգութեան, զի զարական հիրաբանչիր սաղմուսի ոչ սկսանեհն յետ վաճրելոյ զաղմուն ի լման, որպէս այժմուս է սովորութիւն, այս քանի մի տուն ասացեալ ի սաղմուսէն, յարէն զառաջն տուն շարականին՝ կրկնելով երկից կամ երից, և դարձեալ քանի մի տուն ասելով ի սաղմուսէն, յարէն զերկորորդ տուն շարականին՝ նոյնակա կրկնելով. մինչև ապա ի վճարել սաղմուսին՝ երգին զյտին տուն շարականին: Եւ որպէս այժմ յառաջին տան շարականին սկսուած առնեմք զառաջն տուն սաղմուսին, նոյնակա նախնիքն յայլ տուն շարականին սկսուած առնեմին զմիջին տուն սաղմուսին: Նշանակ այսու սովորութեան յայտնապէս երկի այժմ երկորորդ ողորման պահոց ք' Ողորման ինձ Աստուած ին ողորմեա, զի անպատճախան եւ և այն. որ յառաջին տան սկիզբն դմի թիւն իմ, որ է վերջն առաջին տան սաղմուսին, այսինքն՝ Քանի զանօրէնութիւն իմ: Եերկորորդ տան սկիզբն դմի Տառապեալք, որ է վերջն իններորդ տան, այսինքն՝ Լսեի արա ինձ... և ցնծացեն ուկերք իմ տառապեալք: Խոկ յերորդ տան դմի թեամ քո, որ է վերջն ԺԵ տան՝ Փրկեա զիս յարնեն... ցնծացէ լսզու իմ յարդարութեան քո»<sup>10</sup>):

Մի առիթով արդեն հետեւ ենք, որ այս դիտողությամբ Ավետիքյանը նպաստում էր նաև խաղագիտական խնդիրներից մեկի լուծմանը<sup>11</sup>:

Խոկ այստեղ ամրաժեշտ է կարևոր ուղի կետ: Եվ հատկապես այն, որ սրանով հայագիտության մեջ առաջին ամգամ լույս էր սփովում շարական երգերի հին, բուն միջնադարյան կատարման կերպի հետ առնչվող խնդիրների վրա:

Ավելի ուշ այդ խնդիրներն ավելի մանրամասն քննեց Վ. Հացունին<sup>12</sup>, հմտորեն օգտագործելով Մաքենոցաց «Խորատք»-ը (ժամատեղաց) ու 1284-ին գաղափարված «Խորատք շարականաց»-ը ևս, որով պարզ դարձավ, թե ինչքան բնութագրական է եղել հայոց պաշտոներգության համար մարզական օրինությունների և սաղմուների

<sup>10</sup> Տե՛ս Հ. Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ Ժ:

<sup>11</sup> Տե՛ս մեր Բողվածը՝ Կոմիտասը և Բայկական խաղերի վերծանության խնդիրը, «Պատմա-քանախուական հանդես», 1969, № 4, էջ 87—88:

<sup>12</sup> Տե՛ս Օրա՛ Պատմութիւն հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ, 1985, էջ 285:

կատարման ընդիմշարկումը՝ շարականների երգեցողությամբ, և թե, որեմն, ինչպիսի գործնական նշանակություն են ունեցել դասավետների կատարած սկսվածքները նոյն պաշտոներգության մեջ (ի տարբերություն նագամ բյուզանդականի):<sup>13</sup>

Հայ հոգևոր երածշտության արօս հայտնի սկսվածքները պատմական դարավոր զարգացման բովից ու նաև անկման շրջանի միջով անցած իրակություններ են, որոնց նախական բյուզանդացումը վերաբերում է վաղ միջնադարին:

Երբվանից են խաղագրվել սկսվածքները: Դժվար է ասել<sup>14</sup>: Մինչև վերջերս նոյնինկ կարծվում էր, որ ձեռագրերում, առհասարակ չկամ դրամը<sup>15</sup>: Մենք դրանց հանդիպել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի երկու գրչագրերում, գաղափարված XVI դարում<sup>16</sup> և 1684 թ.-ին<sup>17</sup>, տարբեր խաղագրությամբ: Խաղագիտումով դրանցից տարբեր են նաև Գր. Գալապատայանի առաջ ընդանելը<sup>18</sup>: Մինչ վերջիններին զգալի մոտենում են, ասենք՝ XIX հարյուրամյակի ընթացքում ար-

<sup>13</sup> Բյուզանդական պաշտոներգության մեջ սաղմուների ընդմիշարկումով կամ փոխերի ևնու խառն կատարվել են ոչ բոլոր հերթուրում («շարական») տիպի երգերը, այլ դրանցից ուշագրչ կոչվածները միայն, որոնք և ամփոփված են ՀՀ ՀՀ շրջանուն անվանվող հատուկ ժողովածությունում: Այնպես որ, սադուսացույթունը երգեցողության հետ կապող (անցում իրագործում) սկսվածքների աղքան հաճախ դիմելու պետք չեն ունեցել: Զմունանքը Ծեղ սակամ, որ միշյալ անցումները իրազործելու ամենակիրավագան դեպքերում ևս, սկսվածքները բյուզանդական պաշտոներգության մեջ հնձել են՝ որպէս թե քիչ ամենի պարզ երածշտական մի դերով՝ որպես տվյալ երգի ձայնադարձական «աղջարարող» տարբեր, ինչպես ցուց տրվեց արևմտյան երածշտագիտության էջերում: Տե՛ս O. Strunk, Intonations and Signatures of the Byzantine Modes, „The Musical Quarterly“, XXXI, 1945, էջ 339-56:

<sup>14</sup> Գոյն եղել է և ժամանակ, երբ դրանք, կառուցվածքի պարզության պատճառով, ընթաճրապես չեն էլ խաղագրվել (ինչպես ասենք՝ սաղմուները): Համեմայն դեպք, ուստական հոգևոր երածշտագիտնություն, օրինակ, ողլասութեալ սկսվածքների նեմագործության XVI դարին վերաբերելու հանգամանքը միշտ դրանով է բացատրում և. Ուստանակին (տես Օրավականաց աշխատությունը, էջ 80):

<sup>15</sup> Տե՛ս Ռ. Աթայան, Հայկական խաղային հունական գրությունը, Երևան, 1959, էջ 117:

<sup>16</sup> Մատենադարան, ձեռ. № 594, էջ 8ա—բ:

<sup>17</sup> Մատենադարան, ձեռ. № 8522, էջ 1ա—8ա (առորդ ցուց ենք տալու երկու գրչագրերի և նոյն վահականաց պաշտոներգության մեջ):

<sup>18</sup> Գր. Գալապատայան, Օշվ. աշխ.-ը, էջ 175:

պագրված շարակնոցների մեջ խազերով գետնիվաճները<sup>19</sup>:

Ակսյանակների նույնակները գրառված են հայկական նոր ձայնագրության հշանենքի օգնությամբ ևս: Այդ գրառումների մեջ ամենաառժեքավորները Ն. Թաշճյանի իրագործածներն են<sup>20</sup>:

Խոկ ելքոպական ձայնահիշներով գրառված ու մի քանի հրատարակությունների միջոցով վաղուց ի վեր գիտական շրջանության մեջ մտած սկսակների նույնակների վերաբերյալ իմաստի է հետևյալը: Գործը նախաձեռնողները երկու ելքոպական գիտականներ էին, որոնք նեռու լինելով նայերածության փորձից, նին եկեղեցական երգիչների կենանի կատարմամբ իսկ լած մեղեդիները, բնականաբար, չեն կարողացել ճիշտ ձայնագրել:

Առաջին հայագետ Շրյոդերն էր, որն իր «Արամեան լեզուին գանձ» արժեքավոր աշխատության մեջ առաջ բերեց նայ երաժշտության սկսակները<sup>21</sup>. տակավին XVIII դարակըներին (դրամբ գրառելով Ամստերդամում գործած ու իրեն աշակցած հայ վարդապետներից): Երկրորդն էր Վիլոտոն, որը շորջ հարյուր տարի վերջ նորից միջազգային ասպարեզ հանեց մեր սկսակները, դրամբ ձայնագրելով Գանիդի հայկական եկեղեցու դպրապետի երգածից<sup>22</sup>:

Պարզ է, որ կատարված լինելով ավելի ուշ, եկեղեցական արևելագիտության զարգացման շատ ամենի բարձր մի մակարդակի վրա, Վիլոտոնի ձայնագրությունները, Շրյոդերի իրագործածների համեմատությամբ, ավելի հաջող էին: Զննաւելով դա (ավելի ճիշտ, երկի տեղակ չինելով Վիլոտոնի աշխատությունից, որի խորագիրը չի էլ հուշում ընթերցողին), թե այստեղ խոր կիմին նաև հայկական երաժշտության մասին), Պետերմանը դեռևս անցած դարակներին հայկական սկսակների հարցում նենվում էր Շրյոդերի վրա<sup>23</sup>:

<sup>19</sup> Հմմ.՝ Շարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ պժ. Շարակնոց, Կ. Պոլիս, 1853, էջ 874. Շարակնոց, Էջմիածնին, 1861, էջ 781 («Լաս սկսանելոյ ձայնից շարականց»):

<sup>20</sup> Տե՛ս Զայնագրեալ Շարական նովելոր երգոց, Ղաղարշապան, 1875, էջ 10—24 (մենք ճիշտ սրամ ենք առաջ բերելու ելքոպական ձայնագրությամբ):

<sup>21</sup> Տե՛ս J. Schröder, *Thesaurus Linguae Armenicae*, Amstelodami, 1711, էջ 246:

<sup>22</sup> Տե՛ս M. Villoteau, *Description de l'Égypte*, I. quatorzième, Paris, 1826, էջ 338 (պետք է նշել, որ Վիլոտոն այստեղ ցուց է տալիս նաև սկսակների ուշագրավ ու շամեկան մի խազագրություն ևս):

<sup>23</sup> Տե՛ս H. Petermann, *Über die Musik der Armenier*, „Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft“, Leipzig, Band V, 1851, էջ 363:

Վերջինիս ձայնագրությունների մի թերությունը՝ արևելյան-բրիտանեական երաժշտությանը հատուկ զարդուրումների բացակայությունը նրանցում, և Վիլոտոնի գրառումների առավելությունը այս տեսակներով՝ ցույց տվեց Ֆետիսին, համեմատության կարգով մեջքերեկոյ հայկական սկսակների թվաքանիլող երկու տիպերը ևս<sup>24</sup>:

Ամբողջ հարցը այն է, սակայն, որ Շրյոդերի ու Վիլոտոնի գրառումները չեն արտացոլում, նախ և առաջ, նայ երաժշտության համաձայնության (լադային) հիմունքները<sup>25</sup>, և դրա համար գորհացողից չեն կարող համարվել: Բացի դրանից, Ֆետիսի բոլորու վիճակը էր արել (և դա հասկանայի է՝ գիտական ինֆորմացիայի խնդիրներից դեռևս նեռու այլ ժամանակների համար), որ հայկական սկսակների նույնակների գրառման գործում շատ որոշակի մի հանգըքական էր զոյացել արդեն 1864-ին, երբ՝ միսիարյանների «Երգք Հայաստանեայց եկեղեցոյ» գրուկի հրատարակությունից դրվագ՝ Ե. Տնտեսյանը լույս էր ընծայել «Եռվանդակութիւն նուագաց» անոն տետրը<sup>26</sup>: Այս մինչև օրս էլ նայ երաժշտության սկսակների նույնակների՝ ելքոպական ձայնահիշներով կատարված գրառումների մեջ բռնում է առաջին տեղերից մեկը:

Ընդհանուրապես ասած, սկսակներին վերաբերող ձեռքի տակ եղած նյութը քննելի է նաև՝ համապատասխան խազագրությունների վերծանման, հնուց ի վեր ութ-ձայնի համակարգի կապակցությամբ, ապա և սկրսվածքներին կից հիշատակվող, այսպես կոչված «հարակա» կամ «մշտակա» («Յարակայք ձայնից») երգերի որոշման. և վերջապես, մեզ զրայեցնող իրակույթունների հաստատագրման կարճամիտի և ընդարձակ տիպերի տարանցատման տեսակետով:

Սկսակների խազագրության մասնավոր խնդիրը զատ չէ խազավոր ձեռագրերի վերծանության ընթանության հարցից: Եվ պարզ է, որ վերջինիս առաջնարարացից<sup>27</sup> է կախված առաջինը, ուստի առաջնի մի կողմ թողնենք այն:

<sup>24</sup> F. Fétis, *Histoire Générale de la Musique*, I. IV, Paris, 1874, էջ 75-76 և 77-78:

<sup>25</sup> Սոյս խնդիրը իրավացիորեն սրբ է Ո. Աքալյանը. տես նրա վերը վկայակոչված աշխատությունը (էջ 117):


<sup>26</sup> Ե. Տնտեսյան, Բոլմանակութիւն նուագաց Հայաստանացս սուրբ Ակեղեցոյ (ըստ ուրն ձայնից), Կ. Պոլիս, 1884:

<sup>27</sup> Կարծում էինք սկսած լինել զործը, Մաշտոնի ամելան Մատենադարանի գիտական վերջին (1970թ.) նատաշրջանին կարդալով «Պարզագույն խազա-

Բոլորովին առանձին է «հարակա» երգերի ինդիքը ևս, որին, հոյսով ենք, հատկապես կանոնաշառնամբ պատճեն առիթով:

Այնպիս որ, պատճեն կողք-ինչ կանա առնեք նշված կետերից լոկ երրորդի վրա:

Ակսվածքները ձեռագրերում հայունարերկու առաջ դժվար էր լինում թե թե շատ մատահությամբ կողմանորոշվել դրանց հաստատագրման տարբեր տիպերի հարցերում:




Նվրոպացի գիտմականների աշխատություններում բախվում էինք լոկ օրինությունների սկզբածքներին: «Գապասաքայլամի գրքում դրանց հանդիպում էինք նոյնիսկ «Օրհնեացուր զՏէր» կրծառ ձևով: Ա. Պոլսում և Էջմիածնում հրատարակված վերոհիշյալ շարակնոցներում դարձալ վերականգնվում էին օրինությունների սկզբածքները (լրիմ կերպով), որոնց ավելացվում էր մի ատենի սկզբածք էլ (սովորաբար՝ մանկության): Տնտեսանոն, բացի դրանցից, տայիս

գրությունների վերծանությունը՝ գիտությունը: Սա է, որ գիտական նորմածի վերականգնված վիճակում լուր տևառ «Պատմա-քանահրական հանդեսի» եզրում (1971, № 2, էջ 145), արդ խմբագրության առաջարկով՝ նորմածին խորագրին ավելացվելով «Ժործ» խորը: Եթև մետու, որիշ առիթներով՝ որիշ առաջարկներ և ալիք, որոնց լուրի տոկ արդին մոտած ենք, բն միշտ էինք հասկացել արդյոք գործի ընդհանուր ամսակային առումը: Վերջինս ամսակի,

էր նաև մի մածացուցել ու մի հարցի սկզբածքները (թէ դարձվածքուն և գձ-ում): Ինչ Ն. Թաշնանը նոյն սկզբածքները առաջ էր քերում լուս շարական երգերի բոլոր տեսակների, և մասամբ՝ անգամ լուս ձայնեղանակների դարձվածքների և ծանու միջակ ու նորոր ընթացքների: Արդ՝ ո՞րն էր ճիշտը: Տեսականորդն դատելով՝ թաշնամը:

Տեսագրերը ցոյց են տախի սակայն, որ




անցյալում ևս գոյություն է ունեցել սկզբածքները հաստատագրելու երկու տիպ: Կարճամիտով՝ օրինությունների և (որ շատ կարելու է՝) հարցերի սկզբածքների մեկտեղունով, ու ընդարձակ՝ նաև հարցերի շարքի բաղկացուցիչների ու ճաշունների և համարձակների սկզբածքը: Առաջինը ներկայացված է՝ Մատենադարանի վերն հիշատակված գրչագրերից № 594-ում, նետեալ խազպարումով.

[Կիշև 1 (Ճեռագրական երկու էջ՝ ա, բ)]

առողանության ու կիտադրության հշաների համատեղ կիրակության ուսանելի համագամամբների համադիպեցինքն միշնադրյան մի քանի գրչագրերում, որոնք և առ նախու տպագրեցինք մեր գիտակցության մեջ, սրտարուխ հավատով (հմտու., զոր օրինակ՝ Ներսևս Լամբրոնացի, Մելք. Ժող. «Ո՛չ է գործը» միտարք բարի, այլ՝ յիրում մամակային, և ո՛չ գովի՝ յորմամ արտաքոյ ծամուն է» և շարունակությունը, որը ավելի ևս խտանում են հշաները, և

Սկսվածքների հաստատագրման կարճամիտի տիպը այսպիսին է եղել ճիշտ, այսինքն՝ օրինությունների և հարցերի ընդգրկում:

Գրչագիր-խազավոր սույն սկսվածքներին, ամենաշնորհանոր գծերի մեջ, համապատասխանում են Ե. Տնտեսայանի կատարած ձայնագրությունները<sup>28</sup> «Բովանդակութիւն նուագաց» տեսրում: Եվ ախտու, որ երաժշտության տեսարանը լոկ օրինությունների սկսվածքներն են լրիվ (աճ-դկ շարքով) բերել նշված տեսրում:



Կամ Մարմ. Լ. «Դատենա Տէ՛ր զայնոսիկ՝ ոյք դատեն զիս. մարտի՛ր ընդ այնոսիկ՝ ոյք մարտընչին ընդ իս» ու շարունակությունը, և մանավանդ՝ Նարեկ, Մատևան Ոոր. «Մի՛ եղեց ամսոտող ի փոքր վատակոր»:

Իր ապազա՞ն սերմանոց ամբողջի երկրի:

Մի՛ լիցի հնձ երկնել՝ և ոչ ծընանել,

Ոորալ՝ և ոչ արտասուն, խորմն՝ և ոչ հառաչն, Ամանիլ՝ և ոչ անձրնել, ընթանալ՝ և ոչ հասանել, Խնձ ձայնն՝ և քեզ ոչ լուսի, պահատիլ՝ և ամտու

մընալ,


Կողկողն՝ և ոչ ողորմոլ,

Աղաշեն՝, և ոչինչ օգուն, զոմել՝ և ոչ Ծեններել, Զքե՞զ տեսանել՝ և դատարկ եղանել»:



<sup>28</sup> Թիսվանու դրանք բանգարանապիս հնությունների նմ վերածված արդեն, տեղի տղության պատճառով, ցալոր, չներ կարող այսուղ վերաբառարակել այդ ձայնագրությունները ևս:

Մյուս՝ № 3522 գրչագրում եղածը, հայկական միջնադարյան երգային մի որիշ դրայրոցի ավանդություններն են ներկայացնում: Հնայած դրան, այսուղ ևս, բնականարար, նախ մեկտեղված են օրինությունների աճ-դկ սկսվածքները: Հետո տրվում են հարցերը, բոլոր բաղկացուցիչներով, նաև ճաշուներ, համբարձիներ՝ ըստ ձայնեղանակների, ու վերջում ստեղիների մի ամրող շարք:

[Կլիշ 2 (ձեռագրական հինգ էջ՝ ա, թ, գ, դ, ե]):



Սա էլ, ահա, սկսվածքների հաստատագրման ընդհարձակ տիպն է, որի համապատասխանը (դարձյալ՝ ամենաշնորհանուր գըծերով), տեսնում ենք ն. Թաշճյանի կատարած ձայնագրությունների մեջ: Թիսվանու՝ Թաշճյանի օրոք պաշտոներգության մեջ գիշերային ժամը երկի թե արդեն իսկ առավոտյանի մեջ կատարվելով, նաև կարիք չի զգացել աճ-դկ օրինություններն առանձին մեկտեղելու: Եվ մեկ էլ՝ գիտակցար ներկայացնելու համար հայոց սկսվածքների պատմական զարգացման ամենավերջին փուլերից մեկը, դրանք նաև ձայնագրել է ոչ միայն ըստ շարական երգի տեսակների և ուժ ձայնների, այլև՝ ի հարկին՝ ըստ դարձվածք տիպի ձայնեղանակների ու տարրեր (չափակոր, տանը և այլն) ընթացքների (այսինքն՝ ձորր-ինչ ընդհարձակելով վերը բեր-




ված ընդարձակ շարադրածնը, պահպանալով, սակայն, նրա՝ հատկապես մինչև ստեղծերն ընկած մասի՝ սկզբունքը. ստեղծելով մասը Թաշճյանի մոտ սովորական է):

Առա թե ինչու, ելորպական ձայնանիշներով Տնտեսյանի կատարած ձայնագրությունների հրապարակութից հետո («Բովանդակութիւն Շուագաց» տեսրում), այսօր, մեծագոյն ուշացումով, կարիք ենք զգում համորին մատչելի նոյն ձայնագրության փոխադրյակած վիճակում ունենալ նաև սկզբանական ձայնագրությունները:

Դա իրագործելիս կատարել ենք մի երկու մասնակի կրթատումներ (հիմնականում տեղ խնայելու մտահոգությամբ), որոնք ոչ մի շափով չեն անդրադառնա պալվածքների մրակցության, դրանց ամրոջականության վրա:

Սույն ձայնագրություններին ծանոթանալիս, շամեկան է դիտել, որ եթե, սրանք, որպես սաղմոսասացություններ շարականներգությունը անցումն ապահովելու կողման իրակույթուններ, վերաբերում են՝ գլխավորապես՝ շարականի ուժ-ձայնի համակարգին. այլ իրենց մի քանի կողմերով թեկուզ անողնակիորեն արտացոլում են նաև հայոց հին



Սաղմոսարան-Ժամագրքի երգեցողությանը հասուն առանձին գծեր (ճիշտ է, փոփոխված վիճակում):

(Ակավածքների նորանակավորումը հաջորդ համարներում):